**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«21» նոյեմբերի 2018թ. N 143-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԴԱՍԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի N 748-Լ որոշմամբ հաստատված՝ Քաղաքաշինության կոմիտեի կանոնադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել ճարտարապետների որակավորման սանդղակը, սահմանելով արտոնագրի դասեր՝ ըստ հավելված 1-ի:
2. Հաստատել ճարտարագետ-կոնստրուկտորների որակավորման սանդղակը, սահմանելով արտոնագրի դասեր՝ ըստ հավելված 2-ի:
3. Հաստատել ճարտարապետների և ճարտարագետ-կոնստրուկտորների «Արտոնագրի» ձևը՝ ըստ հավելված 3-ի:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11/21/2018

X

ԱՎԵՏԻՔ ԷԼՈՅԱՆ

Signed by: ELOYAN AVETIK 3304750558

Ա. ԷԼՈՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2018 թվականի [illegible] N 143-Ն հրամանի

# ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԴԱՍԵՐ

1. Բարձրագույն դաս

Ենթադաս Ա — ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում առանց սահմանափակումների (բացառությամբ Բ.և Գ ենթադասերում ներառված ոլորտների)

Ենթադաս Բ — ճարտարապետ-քաղաքաշինարարի մասնագիտական գործունեության իրականացում տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ոլորտում

Ենթադաս Գ — վերականգնող ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման, ամրակայման և օգտագործման նախագծերի մշակման ոլորտում:

2. Առաջին դաս

Ա 1 — ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 4-րդ հավելվածի 2-րդ ցանկ՝ միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիա) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծերի մշակման ոլորտում:

Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2018 թվականի ________-ի N 143-Ն հրամանի

# ՃԱՐՏԱՐԱԳԵՏ - ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԴԱՍԵՐ

1. Բարձրագույն դաս - առանց սահմանափակումների

Ենթադաս Ա — արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում

Ենթադաս Բ — տրանսպորտային կառույցների նախագծում

Ենթադաս Գ — հիդրոտեխնիկական կառույցների նախագծում

2. Առաջին դաս

Ենթադաս Ա 1 — արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում

Սահմանափակումներ՝

արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավելի 16 հարկից, մինչև 51մ բարձրությամբ շենքեր, մինչև 50մ թռիչքով տարածական կոնստրուկցիաներով շինություններ, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա), բացառությամբ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանային հարաչափերը (բարձրություն, երկարություն, լայնություն) գերազանցող շենքերի և կառույցների:

Վերը նշվածի վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

Ենթադաս Բ 1ա — տրանսպորտային կամուրջների նախագծում

Սահմանափակումներ՝

տրանսպորտային կամուրջներ մինչև 30մ թռիչքով և մինչև 100մ երկարությամբ, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա), բացառությամբ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանային հարաչափերը (բարձրություն, երկարություն, լայնություն) գերազանցող շենքերի և կառույցների:

Վերը նշվածի վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

Ենթադաս Բ 1բ — թունելների նախագծում

Սահմանափակումներ՝

թունելներ (բացի մետրոպոլիտենից) մինչև 300մ երկարությամբ մեկ թաղով և մինչև 9մ բացվածքով, հիդրոտեխնիկական, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա), բացառությամբ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանային հարաչափերը (բարձրություն, երկարություն, լայնություն) գերազանցող շենքերի և կառույցների:

Վերը նշվածի վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

Ենթադաս Գ 1 — հիդրոտեխնիկական կառույցների նախագծում

Սահմանափակումներ՝

հիդրոտեխնիկական ՀՀՇՆ 33-01-2014 նորմով սահմանված II - IV կարգին համապատասխան, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա), բացառությամբ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանային հարաչափերը (բարձրություն, երկարություն, լայնություն) գերազանցող շենքերի և կառույցների:

Վերը նշվածի վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

3. Երկրորդ դաս

Ենթադաս Ա 2 — արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում:

Սահմանափակումներ՝

արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավելի 6 հարկից, մինչև 21մ բարձրությամբ և 9մ թռիչքով շենքեր, մինչև 24մ թռիչքով տարածական կոնստրուկցիաներով շինություններ, որոնք համապատասխանում են միջինից բարձր ռիսկայնության աստիճանին (III կատեգորիա) :

Համապատասխան սեյսմիկ գոտու համար բազմակի օգտագործման նպատակով նախագծված ոչ ավել 3 հարկից շենքերի և շինությունների տեղակապում, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա):

4. Երրորդ դաս

Ենթադաս Ա 3 — արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և շինությունների նախագծում :

Սահմանափակումներ՝

արդյունաբերական, էներգետիկական, բնակելի և հասարակական շենքեր և շինություններ՝ մինչև երկու վերգետնյա հարկով մինչև 9մ թռիչքով, որոնք համապատասխանում են միջին ռիսկայնության աստիճանին (II կատեգորիա):

Հավելված N 3
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2018 թվականի [illegible]-ի N 143-Ա հրամանի

**ՃԲԴ – Գ -0001**

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Գ»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Վերականգնող ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման, ամրացման և օգտագործման նախագծերի մշակման ոլորտում՝ բացառությամբ ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացման, տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՃԲԴ – Բ -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Բ»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Ճարտարապետ-քաղաքաշինարարի մասնագիտական գործունեության իրականացում տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ոլորտում՝ բացառությամբ ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացման, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման, ամրակայման և օգտագործման նախագծերի մշակման:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՃԲԴ – Ա -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Ա»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում առանց սահմանափակումների՝ բացառությամբ տարածական պլանավորման փաստաթղթերի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնման, ամրակայման և օգտագործման նախագծերի մշակման:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՃԲԴ – Ա1 -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Ա1»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Ճարտարապետի մասնագիտական գործունեության իրականացում միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիա) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծերի մշակման ոլորտում:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԲԴ – Ա -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Ա»

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ
ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Առանց սահմանափակումների:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԲԴ – Բ -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Բ»
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Առանց սահմանափակումների:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԲԴ – Գ -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Գ»

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ
ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Առանց սահմանափակումների:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱԴ – Ա1 -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Ա1»

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ
ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Սահմանափակումներ՝ արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավելի 16 հարկից, մինչև 51մ բարձրությամբ շենքեր, մինչև 50մ թռիչքով տարածական կոնստրուկցիաներով շինություններ, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա), բացառությամբ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանային հարաչափերը (բարձրություն, երկարություն, լայնություն) գերազանցող շենքերի և կառույցների:

Վերը նշվածի վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԵԴ – Ա2 -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Ա2»
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ
ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Սահմանափակումներ՝ արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավելի 6 հարկից, մինչև 21մ բարձրությամբ և 9մ թռիչքով շենքեր, մինչև 24մ տարածական կոնստրուկցիաներով շինություններ, որոնք համապատասխանում են միջինից բարձր ռիսկայնության աստիճանին (III կատեգորիա): Համապատասխան սեյսմիկ գոտու համար բազմակի օգտագործման նպատակով նախագծված ոչ ավել քան 3 հարկից շենքերի և շինությունների տեղակապում, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա):

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱԴ – Բ1Ա -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Բ1Ա»
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Սահմանափակումներ՝ տրանսպորտային կամուրջներ մինչև 30մ թռիչքով և մինչև 100մ երկարությամբ, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա):

Վերը նշված վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱԴ – Բ1Բ -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Բ1Բ»
ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Սահմանափակումներ՝ թունելներ (բացի մետրոպոլիտենից) մինչև 300մ. երկարությամբ մեկ թաղով և մինչև 9մ բացվածքով, հիդրոտեխնիկական, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա):

Վերը նշվածի վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱԴ – Գ1 -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Գ1»
ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Սահմանափակումներ՝ հիդրոտեխնիկական, ՀՀՇՆ 33-01-2014 նորմով սահմանված II-IV կարգերի կառույցներ, որոնք համապատասխանում են բարձր ռիսկայնության աստիճանին (IV կատեգորիա):

Վերը նշված վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԵԴ – Ա3 -0001

# Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր

## ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

ԵՆԹԱԴԱՍ «Ա3»
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ
ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

Սահմանափակումներ՝ Արդյունաբերական, էներգետիկ, բնակելի և հասարակական շենքեր և շինություններ՝ մինչև երկու վերգետնյա հարկով մինչև 9մ թռիչքով, որոնք համապատասխանում են միջին ռիսկայնության աստիճանին (II կատեգորիա)։

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ